Լուսոյ առաջինն յիւրաքանչիւր սեռի է պատճառ այլոց. զոր օրինակ առաջին ճանապարհն սկզբանց 'ի միտս՝ են պատճառ այլոց ճանապարհաց. և առաջին կամեցողութիւնք 'ի կամս՝ են պատճառ այլ ամ կամեցողութեաց։ Այսպէս երանելին և մեծն յակոբոս 'ի սրբ առաքելական առաջին մարտիրոսն՝ եղև բարոյական պատճառ մարտիրոսութեան օրհնեալ իւրոյմ մասնչի. որ անգծելի վահանաւն հաւատոյ զիսեալ՝ զնեաս մուխս չարին շիջոյց. որ երկայնայիր սրով բանեին այ վառեալ՝ զլար որոգայթից թշնամոյն ի հատ. որ զսկզբանեարկան ճշմարտութիւն կործանեալ խաչատ՝ զմրցանակն քաջութիւն 'ի քնիկ ընկալաւ։

Արդ՝ յետ այսքանեաց գերազանց դաստ՝ զանծ ընկալ զօրութեան իւր նեղոյսոյ թիւն ազգէր հրաշապէս 'ի տարերս միանգամայն 'ի ջրեսեան։

'Ի ջուրն, զի 'ի դնել աշակերտաց զոր մարմին նոր 'ի ծով ապէծուսի, զսիկ հանդարտութիւն տանան խակոյն ըստ երդոյն դաւթի, թէ 'ի ծովս են ճանապարհք քո, և ալիք անցին 'ի մէջն։

'Ի յորդն, զի մեղմական շունչ նորին իբրև ուղեցոյց ճարտար առաջնորդեալ աշակերտս տացն՝ անվրէպ ընթացիք տանի զնա 'ի նպատակ սահմանադրութիւն իւրեանց։ ըստ այնմ՝ առաջնորդեց նց 'ի նաւահանգիստ կամաց իւրեանց։

'Ի հուրն, զի դժոգակամոյն վիշտ ինն

ժանամ՝ ի հնել հուր ժամհոտ ի մահագուշակ կոկորդն իւրմէ յարգելումն գնացից աշակերտ տաց նորին, նոքա բարեխօս զնոսա կալեալ, և զնչան խաչին առնագրեալ՝ իբրև զջուր ցողաց ցուցանեին զհուրն, և ինդութիւն մեծաւ անց ցուցանեին զոր մարմինն ընդ այն։

Լաւ ի հոգն, զի ի դնիլ մարմնոյն մաքրութեան ի վերայ քարի միոյ, առ ժամայն հնազանդեալ ոչ բանական, կազմի նոմա ինքնին պատշաճաւոր գերեզման։

Ի Ա. մի ոչ միայն ի տարրական անզգայ դոյացութիւն՝ զնեերհական գործս նոցին բնութիւն նորանչան պանծալեօք նեղգործէր, այլև ի բանական և յանբան կենդանիս։ Վա՜ զի զաչացուցումն բարեպարիշտ ի լուսանիկ իւրում առ ծովեզերբ, յանկարծ մարմին սրբոյ դիպի ձեռաց նր։ և մարմնաշօշափ ձեռամբ յողողել իւրում զաչն՝ առ ժամայն լուսաւորի։

Լաւ դժնեայ թագաւորն բոռ ժանտաժուռ բարուց անուանեալն Կ.սպ, դիմեալ յուխտ յուսոս սրբոյ, անդրէն դառնայր ի վայրագ ժանտութենէն, և լինէր ոչ գառն հեզ ի զարմանս տեսողաց։

Յուլն ամենի զնկեալ ի կատաղութենէն, դիմէր բազում անգամ յարգել զանգլուխս սրբ մարմինն ի դամբարան անդր՝ զանբարբառ մրրմունջ ի բերան ունելով, և անբանն իբրու մարդ բանաւոր պատուելով մեծարեր զմեծարեալն յոյ։

Ուստի հաշակ սէրս յաւէտ բարձրացեալ, քարոզել հնչի ընդ ամ ծագս երկրի, թէ սա է անդլուխ ՝ մեծահրաշ սքանչելեաց գուցանող, և ամենուն առ նա դիմողաց յօգնութիւն ժամանող։ ոմն Ռոմիր արքային սպանիցուց ահեղակերպ փառաց երևեալ, (յամի տն 831։) և առաջնորդեալ զօրաց նոր իբր անպարտելի ահեղ զօրապետ՝ եւ հարկանել միահաղոյն զարիւնարբուշտ արաբացիս՝ զյարձակեալս ի վերայ ժողովրդեանն այնորիկ, որք յատուկ պաշտպան իւրեանց ունէին զմեծն յակոբոս։

Իսա։ Լաւ զպատուական արիւնամած նշանագործ նշխարաց տորին երջանկի ասել աստուծոյ՝ չէ հնչ տարադէպ։ Վասնզի հրանիւթեայ զուարթունք մեծաշուք պատուով յարգանաց եդեալ զարիւնանէրկ խնկաբոյր աբ գլուխն ի բեհեզեայ ընտիր պատատաւ, ածեն մատուցանեն յածակոս աբ քաղաքն Եդեմ՝ առ ամենօրհնեալ աբ ածածինն ի տես և ի մխիթարութիւն, բերելով յարենակցեն իւրմէ իբրև զնախանուէր հաճոյական ընծայ զնուիրեալն որպէսզի իւրոյ միածնի։ Զոր սիրապատար յարգմամբ ընկալեալ ի գոգս իւր, քաղցր արտասուօք և գրկախառն համբուրիւ փարի զնոսա, ոմն թէ ինչ կենդանի։ և մեծաւ պատուով և երգոք հոգևորք ամիսոիեալ զիտեղէ զցանկալին հայմայնից քաշաշալի ամենամաքուր ձեռօք իւրովք իբրև յարքայական գանձարանի՝ ի նշանաւոր սրբ

բուլթեան տեղի։

Այ՝ զի եդաւ առ տահմանաք խնկելի վայ
բին բեթլեհեմի. ուր ծնեալ մանկացեալն Յի-
սուս։ Եդաւ մերձ գերահրաշ լերին գողգոթայ.
ուր ՝ի քառաթևին անշնչացաւ միածինն Հօր ՝ի
փրկութիւն մարդկան։ Եդաւ ոչ բազում մինչ-
ցաւ հեռի յածրնկալ գերեզմանէն քոյ. ուր
թաղեցաւ ոգի մարդ, և յարեաւ ոգի ածզ զ-
րուխքդ և փառաք։ Եդաւ հուպ առ երկնա-
հանգիստ տաճարն հոգւոյն Սրբոյ՝ ՝ի լեառն սիօն
՝ի վերնատունն. ուր առաքելոցն գումարք ար
բին զհրաժարան բաժակ շնորհաց Սրբ հոգւոյն,
և եղէն արիացեալք ՝ի հանդէս նահատակուն։
Եդաւ անդ, յորմէ բղխեցաւ գետ կենդանի
աւետարանական քարոզութեան, և ծաւա-
լեալ ընդ տիեզերս՝ գերածաղիկ պայծառացոյց
զանմին հաւատովք ճշմարտութեամբ և գործովք
բարեաց։ Եդաւ յածահինն սրբատահման կա-
թուղիկէն՝ յերկնաքաշակ ճնաչխարհիկ ածա-
տունկ երկրորդն դրախտ՝ ՝ի տիեզերական նա-
խագահ Սրբ աթոռն Սամ հայոց՝ քաղաքական նախ
կին հայրապետն և առաջին նոմիրադրոտի՝ սրբա-
զան առաքելոյն յակոբեայ ամենազարդ կոչեցելոյ։

Եր. Այլ արդ՝ ոգի առաջի ահեղակերպ ան-
քննին փառաց աթոռոյ ածութեան՝ դաւաքն հրա
նիւթից անմարմնականաց համախմբել եղանակեն
զերեքսրբեանին մշտանոճագ և անլռելի ձայնիւ ՝ի
փող աւագաւոր, ՝ի փառաբանութիւն պատակա-

նին անհաս բարձրութիւն։ Այսպէս և Ի նոյն տիրաց կատոյց լուսակերտ երկնանման ածաբնակ տաճարի ՝ որոց յակոբեանց՝ երկնաւոր գունդք հոգեգումար փառաբանչաց պարառեալ կան հանապազօր, զարիւնամած խնկելի պանդելագործ՝ որ գլուխն մեծին յակովբայ պատուելի դրոշատեալ՝ կաք՝ այ բիւրապատիկք հաղարք ուղղիչք, և որ ի նա ՝ ի սինէ սրբութիւն իւրոյ։ Որք և անդուլ ձայնիւ միաբերան գոչելով զերգս ՝ ածաւօրն գութի, ազգ առնեն մարդկան անդր ժողովիլ, թէ սա է լուառն այ, ընդ որ հաճեալ բնակի ածաւ։ քանզի և որ իսկ բնակի, և բնակեսցէ ՝ի սմա իսպառ։ (սղմ։ կէ։ 15)։

Այսպէս ՝ի հիացումն կարգեալ վերհքն երջանիկ առաքելոցն խուսմբ՝ զղարմանութիւնն բերեն զբան հոգեւոր զորութիւն՝ ի նպատակ բարբառոյ խօսից, թէ զնաղդ անկեցաւ արմատացաւ մեծն յակոբոս՝ ի տիրաշօշաւի մաքրասուն արբեալատար ձեռանէ մեր տն մարիամու՝ յաղիւնատարաս դրախտի երկրին աւետեաց իբրև տունկ պտղաւէտ։ և կամ հրպսխի ձոզաբարձ զարդուք ոգկոզալից զարդարեալ՝ ուռճացաւ յանկեան ՝ի տեզաւոյ պարարտութիւն ՝ի միջակետ երկրի՝ ոչ ընտիր որթ սորեկ։ (Եայ։ Ե։ 2)։

Այս և զերանականն մատուցանէն գովութիւն ՝ի դիմաց ինքեանց՝ ուրախասիրտ բերկրեալք ՝ի նախատատուութիւն նր, թէ արդարև արագ փութացմամբ նախ քան զամենեսին ըզ մեզ

մեզ՝ յառաջեաց բազմիլ 'ի նախագահն փառաց բարձրութեան։ Բանզի որ և վարդապետ մեր ա-ռանիկ 'ի տալ կատարումն անօրինական իւր գործոց, և 'ի վերանալ առ սեփհական ամենն հայրենի բուսարարիալ երանգաւք մարմնոյն, զորդիս լուսոյ 'ի յապշութիւն մտաց գրաւէր։ Լակ և ցնկեցից մեր և հարազատ նորին աշակերտ՝ վկայական մահուամբն 'ի նոյն նամանութիւն պատկերակերպեալ՝ յանզրաւ խնդութիւն զմեզ հրաւիրէ։

Լախկին բաժակարբու 'ի ջրոյս առաքելոց իշխանն մարտիրոսութիւն՝ 'ի նոյն զարմացական կիրս զմեզ առ բերեալ՝ 'ի յարատեւ երջանկութիւն համախմբիլ զամենն յորդորէ։

Հաջամարտիկ զինուորն ըստ նամանութեան անգարտելի յաղթող զօրապետին իւրոյ յոյսի, 'ի նոյն աւադամեծար երկնափառ հանդէս՝ մարտիրոսական պսակաւն թագազարդ պճնիլ օրինակաւ անձին իւրոյ զմեզ խրախուսէ։

Իգ։ Յակոբոս՝ նախահրաւէր առաջնորդ առաքելական դասուն, որ քաջալերեաց զնա վարդապետն արիւնեղանգ շահատակութիւն՝ հանդիսանալ 'ի հոգևոր պատերազմին, և հաղորդակից լինել մարտիրոսական պայծառ պսակին։

Յակոբոս՝ բանալի դրանն վերին, որ զերկնայինն երբեց լուսահեւ շաւիղ՝ մտանել առաքելոցն սրց 'ի հարանարանն ուրախութիւն անմահ փեսային, ծիրանափայլ զգեստուք պճնեալ։

Յակոբոս՝ սրախողխող մահուամբ խաչ-

չարչար կրիցն քնի հաղորդակից, անշուշտ ապա և երանութիւն անճառ անպատում փառացն խոստացելոց կցորդակից։

Յակոբոս՝ անճնաւոր վարարան հրաբորբոք սիրոյ, զոր ՝ի՛ր արկ ՝ի յերկիր. որով զձրկտումն մոռաց և բաղձանաց իւրոց իբրև հուր վերընթաց առ նա ինքն պատճառն սիրոյ ուղղեալ, յառաջ քան զամ վիճակակիցս իւր՝ ընդ նմին հոգւոյ խառնեցաւ։

Յակոբոս՝ ՝ի քիմն ամցուն իբրև կաթն և մեղր ախորժելի. որոյ անհամեմատ քաղցրութեամբ ազգ մարդկային զմայլեալ՝ զանուն նոր տենչալի ՝ի յիշատակ բերէ ուրախակիր խընդութիւն եռանդացեալ ՝ի հոգի։

Յակոբոս՝ արեգակն լուսատիւռ՝ հոգւոց բանականաց. լուսին վայելչագեղ՝ ընորհակալ տեսութիւն դիմաց. արփի աստեղազարդ՝ առաքինական բարեմասնութեանց. օդ քաղցրաշունչ՝ տապախանձ սրտից. երկիր արգաւանդ՝ ՝ածահաճոյ պտղատուութեանց. շուրմբրան բազմամթեր կենաւոր բարեաց՝ ՝ի պէտս լուութեան հոգւոյ նուաղելոց։

Յակոբոս՝ ոգի ծիրանածիր ծիածան ծագեալ ՝ի յամպս ՝ի նշան հաշտութեան. միջնորդ և բարեխօս առ ՝ած վ՚ս մարդկան փրկութեան. դարձելոց յոյս ապաւինութեան. մեղաւորաց ապրիլ քաւութեան. արդարոց պսակ պարծանաց, և ոսկեճարմանդ կապ կցորդութեան։

Ապա

Եւ։ Ի պաքէն ոչ՛ինչ դանդաղելի է մեզ զմեծութիւն վերհասանիւ փառաց ընտրելոցն այ՝ նշանակել ի լուսափայլ տառից առաքելոցն նոցա, կամ ի մարգարէական նախազգեկոյց աղդարարութեաց։ յորոց ոմանք իբրև զհնձան ոզկուզալից յառատահաս ծորակէ շրթանց բղխեն զգիր նի անապակ սիրոյ։ և ոմանք իբրև զառոմանս իւղոս և մեղու՝ հեղուն զեղուն ի միմեանս զքաղցրութիւս բանից։ ոչ առաքեանն աւանիկ յայտնի ցուցանէ զզանազանութիւն փառաց արեգական և լուսնի և աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել փառաւոր և պայծառ լինել վկայէ։ (ա. կոր. ԺԵ. 41)։ Ի. յամ ի դէպ է յարմարել և դաւթեանն բանագրութիւն, թէ իւղով ուրախութիւն օծաւ առաւել քան զընկերս իւր։ (սղմ. խդ. 8)։

Ի պա և մեծն յակոբոս յիրաւի զառաւել լաշուք պատիւ բարձրութիւն՝ ելթէ յերկրի և ելթէ յերկինս լիօրէն ժառանգեալ, և ի փառս երանաւետ բարութիւն պանծացեալ, մարտիրոսական խնկաբոյր իւղոյն օծելութիւն վերհաղոյն փառաց պերճանայ։

Բանզի ի պայքար հանդիսի հոգևոր շահատակութիւն՝ կռուս և կարծրաձայնկոյթ զենուս արիապէս ճակատ յարդարեալ ընդդէմ իմանալի թշնամոյն, զզենուցորակիցս իւր ի նոյն խրախուսեաց։ Ողջամիտ սիրով և գեղեցիկ մտութեամբ ճանաչեցեալ փափաքող, ոչ ամ-

պաշտօնս սրաբդաթեանիչ արժանի՛ խնդամտակցան ցրն ծուլթիւ՝ ի ձեռուն բարձրութիւն վերին կամարին թեւակոխեաց։ Սաքրամենտալ վարուք և անարատ զգաստութիւն հրեշտակական դասուց էզեալ նմանող, նոցին զմարդեալ բարեհամբոյր փառացն արժանապէս հաղորդ կացուցաւ, և ի նոսին դասակարգեցաւ։

Սա ինքն սերովբէ հողեղէն, որ ի ստորնայնոցս ատոն սրաթանիչ եղեալ ի յարին լուսոյ վերնում վիճակին, հոգեւոր երգաբանութիւն ընդ հրեշտակս համախմբեալ՝ պարէ ի խորհրդեանս անկիւնն երանութեան։

Սա մեզ՝ աղբիւր պարտիզաց, և ջրհոր ջուրցն կենդանութիւն՝ ի բարձրութիւն լիբանանու ծիծաղաւէտ ծաւալմամբ յորդեալ ի երգոն։ որ զովացուցեալ զտապ տոչորման սրտից մերոց, երաց զբերանս մեր ի գովեստ և յօրհնաբանութիւն։ (երգ. գ. 15)։

Սա մեզ՝ շտեմարան ջրոց անբաւութիւն, որ հոսանքաբ ինարհաց հոգւոյն լցեալ, արբոյց զբանական երկիրս մեր ի պտղաբերել զարգասիս բարեաց ի պաշար անեղծական։

Սա մեզ՝ երկնատեղաց ցօղ զոհարթութիւն՝ պարարտացուցիչ երկնագեղ բուսոց առաքինութիւն, և անուշահոտ լուսափայլ ծաղկանց գերբնական պտղաբաղ ինարհաց բարեյարդարիչ։

Սա մեզ՝ բարեխնամ բաղմաշնաստ հերկաշարժ։ որ արօրեաց զկարծրութիւն բանեղէն անդ

դեց

գիր՝ մարդկային մտաց՝ յընդունակութիւն հոգևոր սերման օրինաց կենաց՝ ակօտաձիգ մշակութիւն աւետարանին քարոզութեան։

Այս մեզ՝ զուարթարար հողմ քաղցրասիկ շնչեալ ՝ի ծով կենցաղոյս. որով նաւակ անձանց մերոց յաջողութիւն ժամանէ ՝ի նաւահանգիստն կենաց անվախճանից՝ ՝ի քո՛ յ՝ ի յոյն բնաւից։

Իսկ. Իսկ գանձարանն ՝ածային շնորհաց՝ սիրելի զերաքարոզն երկնային վարդապետութիւն՝ երանելին խնկելին և տօնելին յովհաննէս գագաթն աւետարանչաց, արդարև գերազանցել զտաւ բազմապատիկ՝ արդեամբ հոգեկեցոյց շահեկանութեան։

Այլ թողեալ մեր զպէտս քաջամասնութիւն նր զհանդէս՝ որ յաղթէ տեսութեան մտաց և բանի, աստանօր զմեծախորհուրդ անուանակոչութիւնն տակաւուք ազգ. արասցուք։ Ի՝ զի ութնեակ տառիւք բաղկացեալ անունն իւր՝ թաքուն խորհրդեամբ վիակէ յինքեան իմաստս պատշաճականս՝ ՝ի հետազօտել խոհական մտաց։

Բանզի այս թիւ պանծալի՝ է քառակուսի խորանարդ՝ բազմապատկեալ երկոքումբք. զոր բնաւորեալ են ունիլ հաստատուն մարմինք. և անտարակոյս՝ տեսակ իմն է թուոյ լի և կատարեալ. զի ՝ի նմա տեսանի բազմապատկութիւն ինչ պարունակեալ։ Իբր զի՝ է զուգաթիւ, և՝ի զոյդ թուոյ հաւասարապէս ՝ի հաւասարութի լուծանի, երբեմն ՝ի յերկեակ քառեակ, և երբեմն ՝ի քառեակ երկեակ. վասն իմաս

տասէրք զայս թիւ՝ արդարութի կոչեցին։ Եւ
վ՚ս զի մատուցք այսր թուոյ սեպհականեալ ու-
նին զլիութի, ապա իրաւացի դատաստանաւ
և ինքն լի ասի։

Արդ՝ և եթէ յոմհանեսս ոչ միայն շնոր-
հիւն այ էր լի, այլև խորախորհուրդ թուոյ
անուանն գծագրութիւն։ որ 'ի գէմն ութեակ
տառից՝ ութեկի անուամբ իբր սեպհական կոչ
մամբ յորոշի։ այս է՝ կոյս, սիրելի աշակերտ, ա-
ռաքեալ, ածաբան աւետարանիչ, ընչամաքուր,
կենդանի նահատակ, բաժակաբբու, որդեգիր
կուսին։

Դարձեալ՝ յառաջագոյն նկարեալ ցուցաւ
'ի զանազան խորհրդածութիս սոյն ութնատառ
անուն գովելի։ քանզի ութն ատենանօք կայա-
նայր եղն դրան հիւսիսոյ ըստ եզեկիելի։ որ է
յարացոյց ութերորդ անվախճան դարուն, և մնա
նելոյ արդարոց ը դուռն երկնից։ (եզե։ խ։36)։
Ութ էին սեղանք զենլոյ ողջակիզաց հանդէպ
դրան հարաւոյ։ որ 'ի լրումն այնր խորհրդեսն՝
ճշմարիտ ողջակէզն քս 'ի վ՚ր ութանկիւնաւոր
քառաթև խաչին պատարագեցաւ 'ի փրկութի
մարդկան։

Ի հինգև ցութերորդ օր էր խորայելեան աղ-
գին մաքրումն յաղտոյ բարոտութ։ որ է պատկեր
ութերորդի դարուն յաւիտենական մաքրութ։
(զկտ։ Ժդ։10)։ Ութերորդ պարունակ է ատ-
ղալից երկինքն, որ ը եօթանց մոլորակաց համա-

թուի , և իբրև մեծ օղամանեակ ոլորտացեալ
շուրջ պատէ զնոքօք։

Զի՝ Լ՚ա զի ուրեն էն 'ի փրկչէն բարեբա-
նեալ երանութիք. յորոց իւրաքանչիւրքն էն մի
մի առհաւատչեայ երկնից արքայութեան։ (մատ.Ե.3)։
Այլ ուրեմն ասեալ երանութեանցն լուսավայլ
շնորհ՝ համաձայն իմն գտան ընդ թիւս խորհրդա-
ւոր տառիցն կազմութեան՝ շնորհաշուք խնկելի ան-
ուան երանելոյն յօհաննու։

Զ՚ի ինքն յօհաննէս աղքատ էր հոգւով.
քանզի զնեղբին մարդն 'ի չարեաց մեղաց աղ-
քատացուցեալ էր գեղեցիկ խելամտութիւն. զի
էր փարթամացեալ յամ տեսակս առաքինու-
թեան գերասիայլ արքութիւն և ընտիր վարուք։

Զ՚ի սգաւոր էր մտօք. վասն զի 'ի կենս
յայս զթախծագին սուգ և զտրտմութիւն վասն թի-
թևագոյն յանցանաց՝ իբրու զբազմամանեայ
մեղաց ապաշխարութիւն կրեալ 'ի յանձն, 'ի մխիթարիչն
երկնաւոր ակն ունէր բերկրիլ հաստատուն և
անեղկբայելի յուսով։

Զ՚ի հեզ էր հոգւով. ոչ զի ծնող հե-
զութիւն է խոնարհութիւն, և արմատ բարկութիւն
ամբարտաւանութիւն. ուստի և խոնարհս սրտին
անմահն գոլով 'ի բարկութիւն խաւարի, պարզահա-
յեաց աչքս հաւատոյ տեսանել զմարգարէին՝
զբարուի ոն յիմանալի երկիրն կենդանեաց, որ 'ի
ծիրանեղեն վարի հանապազ վարեր հեղուք։

Զ՚ի քաղցեալ էր և ծարաւի. քանզի ըղ-

հոգւոյն անմիւթ և իմանալի կերակուր լի՛ և անթերի ունելով յինքեան զքանն այ, նովաւ ընոյր զքաղց հոգւոյն առաւել՝ քան թէ զմարմնոյն հացիւ։

Ա՛յ՝ զի քաղցն կերակրոյ՝ իբր թէ զթանձրագոյն իրի զգործնական իմաստութեան ունի յինքեան զօրինակ. և ծարաւն ջրոյ՝ իբր զանօրագունի նիւթոյ զտեսական գիտութեան զցուցակ. և այսու երկեակ իմաստասիրութիւնքն զանձն իւր պարարեալ՝ պանծայր Ճախութիւն այ գլուխ 'ի մարմնի՝ երկուքումբ ակամբք լուսաւոր։

Օ՛ի ա՛ր էր սրտիւ. քանզի 'ի կենանս կենցաղոյս զանտեսանելին ա՛ծ՝ իմացական աչօք հաւատոցն Ճշմարտութեան տեսեալ 'ի սրտի՝ իբր զբոլորակութիւն լուսոյ 'ի ջինջ հայելւոջ, զարքայութիւնն այ 'ի նեղքս յինքեան ունէր արդարապէս ստացեալ։

Լու՛ վա՛ զի զաղբիւրն խաղաղութեան և սիրոյ զհոգին ա՛ր այ՝ լրութիւնքն պարգևաց ընկալեալ 'ի հոգի յաւուր մեծի պենտեկոստէին, 'ի շտեմարանէ սրտի իւրոյ զլուսավտակ գետս խաղաղութեան առ ամենեսին բղխեր անսպառելի. և զցամաքեալսն յանծային շնորհաց առատապէս արբուցանէր. զի այս է պտուղ հոգւոյն, սէր՝ խնդութեան և խաղաղութեան։

Որոյ արդիւնաւորեցաւ ընդունիլ 'ի սենեակ սրտի իւրոյ զտուիչն խաղաղութեան զմի միայն միջնորդն այ և մարդկան զյն քրիստոս. որ մահուանչի

խաչիս խրով զմիջնորմն ցանկոյն քակեաց, և միաւորեաց զերկոսին 'ի մի. եբարձ զկնոտվու-թիւնն, և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի՝ ը առաքելական ձայնին, ոչ և հրեշտակք կան-խաւ աղաղեցին. փառք 'ի բարձունս ՟ց, և յեր-կիր խաղաղութիւն։ (ղուկ. բ. 14)։

Զ Նոյն և երանելի աւետարանիչս գրով և բանիս ճշրիւ փողով բարբառոյ քարոզէր առ մարդիկ բ ծով և բ ցամաք. ոչ զի մերժեալք զհոգին խոտվութիւն 'ի սրտից հրաւանց, յար-դարեացէն զանձինս ընդունիլ զհաշտարարն՝ միջնորդն, բարեխօսն, և զերկնաւոր խաղաղու-թեանն պարգևատուն. և ժառանգել զանեզրա-կան բարութիւն՝ զանվախճան կենաքն, և զան-կեալ երանութիւն։ Զ այս ամ հոգւոյն աչք տեսեալ մարգարէն՝ ասէր. ոչ զի գէղեցիկ են 'ի վր լերանց սիոնի ոտք աւետարանչացն խա-ղաղութիւն, և աւետարանչացն բարութիւն։

Զ Ի հալածական էր վ՚ն արդարութիւն. վ՚ն զի զտերունական արդարութիւնն վարդապետու-թիւն՝ հալածումն 'ի չարաց ամբարշտաց համբե-րութիւն յանձն առեալ՝ ուրախութիւն ուրախ լի-նէր 'ի քս, յուսալով ժամանել 'ի յաւիտեան-կան հանգիստն և խնդութիւնն. ոչ յոմսէի յետ մահաբեր կրիցն դաւաճանութիւն՝ 'ի թագաւո-րական թշնամանութիւն և 'ի փառս։

Զ ոտանոր ամիշին միտք, և լուն լեզուք, եթէ զիարդ զտրտմաբեր անձկութիս տարժանակն կրից և

խոշտանգանաց, ոչի է աղքատանալն, 'ի սուգ մտա
նելն, հալածականս լինելն, նախատինս կրելն, և սուտ
բասրանաց զրպարտին, անվրդով դիմաց և ան-
խռով մտաց հաճութիւն կամաց հանապազ յանձին
բարձեալ բերեր երանելին։ Այս զի արդարև
հեռի է այս 'ի սովորութենէ մարդկային բարուց,
որ միտ զախորժելիսն խնդրեն։ բայց հոգեկիր
սրտի քաջասէր անձինս չէ՛ ինչ տարադէպ, որ խա
ղին կրիցն էր փափաքող։

Այսպա յօհաննէս յուրթն երանութիւնս ա-
ռաւել քան զբաղումս արժանաւոր պարծա-
նաց պանծայ։ և ոչ զարեգակն 'ի կարգս աստե-
ղաց՝ լուսապայծառ փառաց ակնախտիղ շողշողէ։
Իսկ։ Այլև սորա կոչումն անուանն ըստ ստու-
գաբանական քննութեան՝ պարգև, կամ շնորհ ան-
լսի։ և չքնաղաշուք այս անուն՝ ըստ խորհրդա-
կան տեսութեան առաւելագոյն ազնուականին
յօհաննէս՝ յաւէտ պատկանի։ Այս զի յանապա-
ման իմաստութեան հօրն բարձրելոյ լցեալ և բար-
գաւաճեալ լուսափայլ պարգևաց իմաստութեան
և հանճարոյ՝ զանհատ և զանրմբռնելին էզական
մտաց 'ի ծանօթութեան մարդկան վերածէր։

Ոչ ոչ մոլեսս՝ սկիզբն բանից որարեալ
յարարչութենէ երկնի և երկրի, և 'ի նոսին յարեալ
յարմարեր զոր 'ի նա էն եղանութիւք։ Ոչ ոչ
մատեանս՝ զնախահարցն քսի ըստ մարմնոյ ազ-
գատոհմաւն մինչև ցծնունդն 'ի սբ կուսէն իւ-
րաքանչիւր յականէ յանուանէ 'ի մէջ մատուցանէր։

Ոչ

Ոչ ոչ մարկոս՝ ի մկրտչէն յօհաննու առէլ սկիզբն, և զբանն մինչև ցմկրտութիւն ան հասուցանէր։ Լուս ոչ ոչ զուկաս՝ զծնունդն նորին մկրտչի, և զգաբրիէլեան սուտուն՝ որ առ կոյսն մարիամ, և զտօհմաթիւս մարմնաւոր ծննդեան փրկչին յամ՝ ի Ճառ արկանէր։ Ա. մէ անբաւաղոր շնորհ հիւ հոգւոյն այ արծուօրէն թռուցեալ մտաք՝ ի վեր յերկինս, և անցեալ զանցեալ զամ վայրաքն օդոց, և զամ բարձրութիւն աստեղաց, և զամ դա սակարգութիւն հրեշտակաց, երթեալ ժամանէ յանճառելի աբ երրորդութիւն և՝ ի մի ածութի։ և յայնմանէ սկիզբն առնու աբ՝ այ աւետարանին՝ յա սէն։ ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ ած՝ և ած՝ էր բանն։ (յօհ։ ա։ 1)։

Ա. յս այն է՝ զորմէ մարգարէ ոմն նախա գուշակ եղեալ ասէր։ աւասիկ արծիւն մեծ՝ մեծաթև և լիամագիլ, ՝ի մտանէն՝ ի լիբանան, էառ յրնտիր ընտիր մայրեցն անտի։ (եզկ։ իէ։ 3)։ Լիբանան թարգմանէ պայծառ։ և արծիւն է յօհաննէս, որ մտեալ մտաք՝ ի պարզ պայծառութի երրեակ և մի ածութիւն, առաւտուրէն ընկալաւ զլուսափայլութի իմաստից ածաբանութիւն։

Ո՛ այսքանեաց շնորհաց ընդ զոգուն՝ և զշնմարիտ ծանօթութի միտնական աբ երրորդութիւնն՝ ի հայրածին բանէն ուսեալ, զբանս կանացս դաս արիիապէս պայծառացուցանէ նոր վին կենաւոր ի թարգապետութիւն։

Իր։ Ա՛ սա բան սորա՝ անդրդուելի ախոյեան՝ և հաս

հաստակամ անշարժ յենարան 'ի քո հաւատոյ ցեղոյ՝ ընդդէմ հոգեմարտ զօրացն բեղխարայ. և ինքն՝ մարդ ածազգեաց, կառավար եկեղեցոյ, վարդապետ հաստակաց, հաղորդապետ խորհրդոց, և մատակարար հոգեւոր կերակրոց առաւել քան զյովսէփ, որ էր հայթայթիչ մարմնաւոր հացի։

Բան սորա՝ յայտնաբարբառ քարոզ կարողութեան՝ իմաստութեան՝ և բարութեան բանին այ, որով յոչնչէ 'ի գոյ ածան բնութիւնք ամ արարածոց, թէ երկնայնոց և թէ երկրայնոց. զի՝ ամ ինչ նոսա եղև։ (յօհ. ա. 3)։

Բան սորա՝ տիեզերալուր աւետարանութեան շնորհաձիր պարգևողին յաւիտենական կենաց, և կենսառիթ նեղգործութեան հայրական լուսոյն առ ազգս մարդկան՝ յորդեգրութի այ հաւատովքն Աչմարտութեան. զի այնմ՝ նոսա կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան։ (յօհ. ա. 4)։

Բան սորա՝ անսուտբիւր վարդապետութեան փրկարարիթ մարմնաւորութեան ծոցածին բանին, և զի մարդկայինս բնութեանն անչիրոթ և անբաժանելի միաւորութեան նորին. զի այնմ՝ բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ։ (յօհ. ա. 14)։

Բան սորա՝ զարտաձայն ազդարարութիւն յայտնելոյն առ մեզ որդւոյն միածնի՝ զանտեսն յինքնութեան զարարիչն երկնի և երկրի. զի այնմ՝ զանձ ոչ ոք ետես երբեք. բայց միայն որդին միածին որ 'ի ծոց հօր, նա պատմեաց մեզ։

ԻԹ. Լա արդ՝ կենդանագիր կերպարան ջրից այսասեռ կենդանեաց՝ զոր հոգւոյն աչքք տեսանէր երկնիկել, Ճահոլսպէս պատկանի առ ջրեսին աւետարանիչս. այս է՝ մարդոյն առ մատթէոս, առիւծուն առ մարկոս, եզինն առ ղուկաս, և արծուոյն առ յովհաննէս։

Մարդոյն պատկեր՝ զլուսո մարմնոյ ծնունդն քսի 'ի կուսէն և կատարել մարդկութիւն ը իւրում ածութեամբ խառնեալ անշփոթ միաւորութեամբ խորհրդապէս նկարագրեն։ Որով երբ ընդելական խայծիւ որսացեալ զմարդիկ, տակաւ առ տակաւ ձգէ 'ի ճանաչումն Ճշմարտութեան 'ի հոգւոց փրկութիւն։

Առիւծուն տիպ՝ զահաւոր և զածավայելուչ քարոզութիւն քսի՝ և զերկրորդ գալուստն նոր յայտ առնէ. որ զորէն առիւծու բազմեալ յարդար գահոյս դատողութեամբ, դատէ զարդարս և զմեղաւորս ը իւրաքանչիւր գործոց։

Եւ ևս՝ զիշխանաբար քարոզութիւն մարգարէ նշանակէ և զանսերկիւղ համարձակութիւն նորա ընդդէմ հակառակամարտիցն Ճշմարտութեան. առորս առիւծաբար դոյմամբ ածաստատ բանիցն ահաւորութեամբ ածէր զնս 'ի զարմանս հիացման, միանգամայն և 'ի տոկումն և 'ի զգաստութիւն։

Եզինն կերպարան՝ իբրև զեզն պարարակ զենանիին քսի 'ի հաճոյական պատարագ 'ի վերայ քառաթև սեղանի խաչին՝ 'ի դէմս ածէ։ Լակ նկատմամբ զուկասու՝ զզօրութիւն և զարդիւնս

նարար պտղատուութեան բանի վարդապետութեան ցուցանէ. որ զբանեղէն երկիրն բազմաշխատութեամբ հերկագործեալ յընդունակութեան բերնելոյ հոգևոր սերման։

Արդ՝ մեր տեսիլ զերազանութիւն համբարձումն քան առ հայր 'ի յերկինս, և զանվախճան թագաւորութեան նորա բերել 'ի ցուցակութիւն։ Եւ զարձեալ՝ ի տիպ և օրինակ վերամբարձութեան երանելոյն յովհաննու. քանզի երկրեալեան թուացիք տեսակեանս և գործնական նպաստ խոյացեալ 'ի բարձունս, և հոգևոյն իմաստ տիւք ամային անհաս խորհրդոյն իրազգած է զեալ, լուսափայլ քարոզութեամբ ամենաբանէ զանսկզբնաբար սկզբնաւորութիւն բանին այ 'ի հօրէ, և զիրկագործ մարդեղութիւն նր. որ ընդ հօր և ամբ հոգևոյն փառաւորի համապատուաբար 'ի մի իշխանութեան գովութիւն։

Եւ որբազան աւետարանիչն կենացն բանի յովհաննէս՝ օրինակաւ անձին իւրոյ ուսուցանէ զազգ մարդկան՝ իբրև զարդուն կորովի արագաթռիչ լինել առ հոգևորս. և հանապազ անթարթափ աչօք պչնուլ յամենատես անբասուն երեսս Ճառագայթն ամենատեսակ լուսափայլութեան, և զուարճանալ 'ի գեղավայել ծայրագոյն փրկութիւն շնորհ սոյնպէս բարեփառութեան։

Եւ զի ոչ արժիւն 'ի բարձրութիւն ամպոց կորովի բբօք նշմարել զերս՝ որք են յանդունդս խորագատակ ծովու. ըստ ամենն օրինակի ամբն յո-

հանեսէ վերամբարձեալ ընդհանրաբար՝ ի բարձունս, նշմարէ՝ ի խորս ծովու կենդանոյս. և զընկղմեալսն ալեաց մեռանոց իբր՝ ի յատակէ անդնդոց վերարձուցեալ՝ հանգուցանէ յանմահ կենդանութիւն՝ ի քաղաքն անդրանկաց՝ ի վերին աիոն։

Ը. Ինդաբոյս բնաւորութիւնէ արծուոյն կրբ թեղ զձագս իւր՝ ի հայեցումն արեւոյ ճանաչ պայծառութիւնէ ականն արեւու. որով և որոշումն առնէ՝ ի մէջ նոցա. զի որք կարեն անթարթամ պչնուլ ընդ այն, մնուցանէ զնոսա իբրև հարազատ. իսկ որք անկարանան հայել՝ իբրև զտարախորդս արտաքս ընկենու։

Ի՝ սոսա այսմ և յայմհանէսն՝ ածային ուղիղ բանիւ՝ վարդապետութիւն զաղդս մարդկան առ իմանալի արեգակն՝ ի բանն հայրական ակնակաց ոգոյ առնել պատրաստեր. զուղղատեսան բաց զամ խնամով մնուցանէր և դարմանէր. և որք կարուցանէին զաչս, զի մի տեսցեն զլոյսն ճշդմարտութիւն, զնա՝ ի բաց հեռեր, և՝ ի մահ կորստեան մատնէր. սոսա այնմ՝՝ ի խաւարի է, և ը խաւար շրջի. զի խաւարն կուրացոյց զաչս նորա։ (ա. յօհ. բ. 11)։

Ի՝ ընդ ծուոյն է ընդ եղջերուս և ընդ վիշապս մարտ մղել. զի սա անհնարին թափով՝ ի վը յարձակեալ՝ իբրև տեգ գեղարդեան մեկ զկնոց իւր ընդ կուրծս նոցա, և վիրաւորեալ՝ ի մահ յերկիր հարստէ։

Ի՝ յամ համեմատ և աքանչելին յայմհանէսն՝

և անպարտելի ախոյեանն նոր եկեղեցւոյ՝ ընդ խաչարակալ իշխանին մահու 'ի կռուոնի այսր յաւիտենի պայքար յարդարեալ՝ օժանդակու թեամբ աջոյ բարձրելոյն հարկանէ 'ի հարուածս սատանիկս զվիրագն անհեթեթ. և առաքելական իշխանութեամբ խորասոյզ առնէ յանդունդս անհնարին, անխզելի շղթայիւք տերունական բանիւ կապեալ անդուծանելի։

Ա. Ըստ ինքն բերէ զնմանութիւն երկնային դասուց առաջին քահանայապետութեան վասն բարձրութեան կայանին, և արագօրէն սլացման նոցին առաւած անընդմիջաբար, և լուսատիպ նը կատման ճաճային երևմանց. որք և յետ այ զիւրեանցն Ճանաչելով զսրբազան կարգաւորութիւնս, օրհնաբանեն անդուելի նուագաւք զհաստատիչն բնաւից. որպէս աւանդեցին մեզ ճաճակիր հարք, ուսեալք 'ի լուսաւոր բանից առաքելոյն. որ ետես իմանալի աչաւք 'ի յաիշտակին մինչև յերրորդ երկինս։

Ա. պաքէն ինքնակ դասակարգութիւն հոգեզինայ՝ յերիս կարգս քահանայապետութեան որոշեցան յարարչէն, ըստ անքննելի իւրումն խորհրդոյ. այլ առաջինն է մերձաւորագոյն ճաճութեան՝ յաւետ ընկալեալ զլուսավիպլութիւն գիտութեան նոր, զերազն 'ի ստորին քահանայապետութիւնս. ոչ զի և բարձրագոյն գոլով քահանայապետութիւնն առաջին, է ճաճատեսակագոյն և ճաճպետականի երրորդութեան հպատրագոյն. որք

ենն աթոռք, սերոլքէք, և քերոլքէք։ Եւ սոքա
'ի բարձունս շուրջ զսթոռոյն ածութեամբ թեւաւ
պարեալ՝ բարեբանեն յարաւիղղ բարբառով զե-
ռելոցս տերութիւն։

Այս յօհաննէս 'ի տիպ նմանութեամբ առաջին
քահանայապետութեամբ՝ արագօրէն թեւակոխեալ
'ի վերս 'ի բարձունս մաքուր մտաց իմացական
տեսութեամբ՝ առ անհասանելի աբ երրորդութիւն
հուպ մատեաւ։ յորմէ ծանեաւ զանքնդելին 'ի
հրեշտակաց և'ի մարդկանէ՝ զանակզբնական ծը-
նունդն հօր բանին, և ուսոյց տիեզերաց։ թէ՝
'ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ աստ։

Զի։ Բդ՝ ուսեալ սոքա յիմաստութէն այ՝ ու-
սուցանէ մարդկան զածայինս։ իսկ իմաստու-
թիւնն այ՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ էութիւն այ։
իսկ էութիւն այ է ամենապարզ։ ապա և իմաս-
տութիւն այ՝ որ է նոյն ընդ էութեն նր, է ամե-
նապարզ։ քանզի հոգեկիր աւետարանիչս ոչ ձեռ
նարկէ զաստեղաբաշխականէն, կամ զերկրաչա-
փականէն, և զայլոց։ այլ զածաբանականէն։

Բդ՝ ածաբանութիւն՝ ըստ որում է ճա-
նաչելի ոչ զՀմարիտ, է տեսական։ և ըստ որում
է առնելի՝ ոչ զբարի, է գործնական։ Իսկ
ածաբանութիւն է գիտութիւ յայտնեալ յայ առ
ազգս մարդկան, ապա ոչ է ըստ նմին ամ գոլ
յեց գիտութիւ։ վասն զի ածաբանութիւն է գիրք
կենաց, և հեղինակ ճանաչման Հմարտութեան։ հիմն
եկեղեցւոյ հաստատութեան, և քարոզ փրկութեան։

Բդ

Այդ՝ ամենաբանութիւն յօհանանու Ճառէ զանառական էութէ, և զանքննին խորութէ բանին այ. որով և յայտ առնէ զկրկնաւորին անժամանակաբար որդւոյն ՚ի հօրէ ըստ անձին, և զանբաժանելի գոն ըստ էութէ՝ յասէին. և բանն էր առ ամ։

Օ ի թէպէտ որդի ասէլ և ծնեալ ՚ի հօրէ, այլ ոչ դադարեալ. զի ամ լոյս յարեգական ծագէ միշտ, և ոչ սպառի. այսպէս և բանն ՚ի հօրէ. և ամ լոյսն Ճառագայթէ յերկինր, այլ ոչ բաժանի յաղ բերէն լուսոյ. այնպէս և որդի ՚ի հօրէն լուսոյ. զի էթէ արեգական լինէր յաւիտենական, անտաղ բակոյս և լոյս նոր ընդ նմին էր յաւիտենական։

Ուստի յաւիտենական բանն ծնանի միշտ ՚ի հօրէ ՚ի վերս քան զմիտս, և անդր քան զնմանութիւն. ոչ չափի կապարաւ. ոչ սահմանի սահմանաւ. ոչ անկանի ընդ ժամանակաւ. այլ անժամանակ է և յաւիտենական. որոյ և սկիզբն է անսկիզբն, վասն որոյ և անվերջ. զի միշտ նոյն է ՚ի յաւիտենից մինչև ՚ի յաւիտեանս. և որ է միշտ՝ ոչ ունի զսկիզբն. և որ ոչ ունի զսկիզբն, ոչ ունի և զվախճան. և որ ոչն ունի զսկիզբն և զվախճան, է յաւիտենական, ապա է անեղծ և անաստեղծ. յայտագոյ որոյ ասէ. և ամ էր բանն։

Յոր սակս դիոնէսիոս գագաթն ամենից՝ գերեցիկ բարբառի զյօհանանու յասէն. յովհանանէս է երկնից աւետարանիչ, և վարդապետութեան նոր արքիեպարդ Ճառագայթ։

ել։ Այս սա է արդարև անուանեալն վա-
կաս լանջաց փրկչին յոմ։ սա՝ տաճար արուեստն
և բնակարան Աստուծոյ։ սա՝ լուսաւոր
շաւիղ հանճարոյ, և պսակ գիտութեան։ սա՝ ան-
դունդ խմաստութեան, և ուսումնարան Աստ-
ուծանից։ սա՝ մանուսաղայն առաքելական դա-
սուն, և գագաթն մարգարեական գնդին։ սա՝
ծայրագոյնն աւետարանչաց, և իշխանն քարոզ
չաց։ սա՝ մաքրակոյլ ճնիք կուսութեան, և հա-
յելի անարատ կրօնաւորաց։ սա՝ մշտաչարչար ա-
բիսական մարտիրոս, և հաճելական պատարագ Այ։
սա՝ ծաղիկ դաշտաց, և շուշան հովուաց։ սա՝ բուր
վառ անուշահոտ բուրմանն հոգեմեղական խրն
կոց, և անօթ լնուիր շաքարախառն քաղցրաւե-
նեաց։ սա՝ արիւնածագ ատաղ առաւօտեան, և
հեռեակ արուսեկին բարձրեալ։ սա՝ սիւն ուղիղ
հաւատոյ, և անդրդուելի վեմ եկեղեցւոյ։

Լակ աստուծոյ վարդապետութեան տուրա՝ վա-
ղանեալ մեռաց 'ի գործ զարթուցիչ։ զայրացեալ
ոգւոց՝ հեզահոգեայր հանգուցիչ։ ատելութիւն վա-
ղակիզաց՝ 'ի սէր բորբոքիչ։ 'ի յանցագործ ըն-
ջաքաղց մարդութիւն զգաստեալց՝ 'ի յառաստաձեռ-
նութեան փոխարկիչ։ 'ի վարս վատթարս խառնա-
կրթեալց պատաղելոց՝ 'ի լոյս ճշմարտութեան վերա-
ծիչ։ 'ի շաղփաղփ շամբրութիւն յանձախելոց՝ 'ի
կարևոր մտախոհութեան յեղյեղիչ։ 'ի յոգեմոլ
վրիպումն զառածելոց՝ յուղղութիւն վարուց դար-
ձուցիչ։ յայրատատուս հայեցուածս մոլելոց՝ յա-
նաս

հարատեւութիւն մնաց խրախուսիչ։

Ա. Հա՛ մեր ենայ հնարիւ բարեաց։ ահա՛ պա-
բիսպ ամրութիւ, և աշտարակ պահպանութիւ։
ահա՛ վերատեսուչ խնամատար, և պատգամա-
խօս վերնային։ ահա՛ մունետիկ ճշմարտութիւ,
և մատակարար արդարութիւ։ ահա՛ գանձապետ
շնորհաց, կառավար անձանց, և ուղղիչ ստահակաց։

Յովհաննէս արագօրէն ժամանէ՝ ի գերեզ-
ման յարուցեալոյն, և խոնարհեալ տեսանէ զպա-
տանացն կտաւ, զմեռան թողեալ պետրոսի։
Ապա յօհաննէս իբրև տեսակցանի օրինակ, և
պետրոս՝ գործնականի դաղափար։ Յօհաննէս
իբրև ուղղիչ կատարիչ նեբբին կարողութիւ
մարդկան՝ անվրէպ հայիլ՝ ի լոյն ճշմարտութիւ,
և պետրոս՝ իբրև բարեզարդիչ կենաց կենցա-
ղականաց։ յօհաննէս յայտնիչ վերաքարոզիչ
գերբեակ անձնաւորութիւ միոյ ածային էութիւ,
և պետրոս՝ հոչակիչ զոն տնօրէնութիւ։

Սոքա իբրև կրկնակի նաւարք միոյ լծոյ
կշտարդի՝ կախեալք յիմանալի բարձրութիւ բա-
նին մարմնացելոյ։ միուն կշռի ճանապարհն ճշմար-
տութիւ, և միւսոն՝ արդասիք բարեգործութիւ։

Ը։ Սադդուղեցացին մարիամ խնկաբերոյ ի-
դոյն օծութիւ յատս ետն մերձենոյ։ Թովմաս վարա-
նական մտաք զկոցուած կողին շօշափիլ։ իսկ յՍ-
հաննէս յանձնապատուն համարձակութիւ զան-
հպելի լանջուվք որդւոյն ՝այ փարիլ։

Մեծն եւսիեաս կենաւարարոյկ հրով սե-

բօքէին՝ սերբէանայ. եզելիսել տէսլեամբ չո-
բեքկերպեան կենդանեաց խելամտանայ. այլ
յօհաննէս անընդմիջաբար ՝ած-ային շնորհաղեղ
շնչուն մաքրազարդեալ՝ ՝ի շնորհս առատու-
թեան պերճանայ։

Մովսէս կարգի կանոնադիր իսրայէլեան
ազգին. ահարոն նոմիրագործ ստուերական օրի-
նին. բայց յօհաննէս ՝ի նորս օրինի հաստիչ հա-
ատոյ, և դաստիարակ կանթուղիկէ եկեղեցւոյ
նախահրաւէր կոչմամբ հաստատի։

Դասիթ այր բարեմիտ՝ որ քնարահար
նոմագերգութիւն հանապազօր ՝ի փառաբանութի
մեծվայելչութեան այ կանխէր, գթէ և ապա-
շաւէ։ Սաղոմոն՝ որ ՝ի տիս անդ մանկութեան լի էր
ամ ՝ած-ապարգև իմաստութիւն, զառաջ-անի կա
մաւ ՝ի սնոտի փափկութիւնս աշխարհի. թէպէտև
առ յաստա ստրկացեալ՝ ունայնութի ունայնութեց
զայն ամ վայելս վարկանի։ Լուկ յովհաննէս իբր
ոսկի փորձեալ ՝ի հուր, յամի ընտիր գտանի. և
կուսական մաքրութիւն իբր մշտավառ անաղօտ
լապտեր՝ լուսապայծառ նշուլիւք փայլի։

Լիսկատարն հաստակաւ ծերունին եղիսա-
զար՝ հրաժարեցաւ ՝ի ճաշակմանէ խողնեանցն
մա՞ հայրենի օրինացն պահպանութեան։ Ա.յլ սքանչ
էլին յովհաննէս ՝ի մանկական տիոց մինչև ցը
վախճան կենաց՝ չէառ երբէք զաշխարհային
փափկութիւն զճաշակ։

Ա.ռին բարեփառ քաջամարտիին յուդա
մա

մակաբէ՝ անպարտելի սխոյեան ընդդէմ յար-
ձակման թշնամեացն գնդի արձանանայր, և ան-
ընկճելի յաղթական յամ արշաւանս գտանէր։
Իսկ քաջ զօրապետն քան յօհաննէս զենու հզ-
գւոյն այ սպառազինեալ, զդիւազգի փաղանգս
բանսարկուին զօրաց աղարտեալ հերքէր։ և զվա-
ճառեալն 'ի ծառայութի մահու յաղատութի
կենաց զերծուցեալ, բարեկամս այ և սիրելիս
կարգէր։

Այն սա՝ յաղթօղ զօրապետ։ պատուական
պարտելի։ անընկճելի զէն զօրութե։ անսիրելի
դղեակ ամրութե։ անկորզելի կամուրջ հաւատոյ։
ախորժելի ճաշակ քաղցրութե։ սրբանուն
պարգև բարութե։ փախաքելի սեղան հացա-
լից։ անհամառօտելի քարոզ հօր բանին։ անաղօտ
լուսատեր աւետարանին։ ընկերակից և որդե-
գիր ճշմարտին և կուսի, և եղբայր քան։

Ել։ Ա. Որդ՝ քանզի 'ի վարիլ հոգւով առ սահ-
մանաբ ասիոյ 'ի մեծն եփեսոս, կարգի անդ
հրաւաւ՝ հնոցի բաղանեաց։ ուր հանդիսանայ
զօրութիւ հոգւոյն սխոիչ տարածիչ զհրաշագործ
ծութենն շնորհ առ օտարազգիս։ Յարուցիչ կէ-
ցուցիչ նշանագործ արուեստիւ զչարատանջ
հեղձուցեալն 'ի դիւէ՝ զորդին հաղարապետի։
Սասիչ զերծուցիչ զերկուտասան պատանիս
կղզոյն պատմոսի, զպատրաստեալն 'ի զոհ դի-
ւամեծեներ զոհարանին։ և հարիչ հալածիչ յա-
նուն յսի զոգին պղծութե 'ի խորս անդնդոց։

Լուժիչ դարձուցիչ ՝ի դիւահսեղդ մահուանէ ՝ի կենաց կենդանականս տէրունական նշանաւ՝ զորդին միկասայ քրմոյն սուգեսդայ՝ իբր ՝ի թմբուքէ քնոյ զարթուցեալ առ ՝ի քայլ ոտից։ Կարկիչ կարկամիչ զնեղեալս զնեղաշուրթն լեզու ժան տաժուտ մոլորեցուցչաց կերբենթոսի և եբիոնի , որ խանգարել զեկեղեցին ձգտէին յուղղադաւանն Ճշմարտութէ ։

Ապա գրէ զպրակն կաթուղիկեայց առ ե՝ կեղեցին քան ՝ի զչուշութէ ապագայից , և յա՝ ճումն հաւատոց և գործոց բարեաց ։ գրէ և զաճապայանեալ տեսիլն դժուարաթարգմանելի մերոց իմաստից ։ ուր ՝ի սկզբանն յաճապէն ազ՝ դեցութէ աւանդէ եկեղեցւոյ խրատս կա՝ ըւորս , յորդորմունս ոգեշարժս , և կշռամ՝ բութիս ազգուղական , յասելն ՝ի դիմաց քանի՝ ւեր արթուն , և հաստատեաց այսուհետև , զի հանդերձեալ ես մեռանիլ ։ քանզի ոչ գոի ըզ գործ ինչ ՝ի քեզ կատարեալ առաջի այ ։ և դարձեալ թէ՝ ոչ գիտես կարօտիլ յաշխարհի իմիք ։ վայ դու ես ողորմելի և հեզգ և աղ՝ քատ՝ ըստ ամի կոյր և մերկ։ (յայտ ։ գ ։ 2 ։ և 17)։

Շղ ։ Յամ է ապա զդառն տանջանացն նորա՝ նշան սքանչելիս ածել ՝ի ցուցակութի ։ զի մինչ դահիճքն անագորունք հրամանաւ բռնաւորին կապեալ զքարոզն կենաց՝ արկին ՝ի հրախարոյկ եռացեալ կաթսայն , և արբուցին նմա զմա՝ հաւութն դեղ թիւնամակարդ ։ նա ինքն զբ՝

բալիգն օծանդակութիւն աջոյն յոր՝ ոչ զերիս մանկունս անվնաս զերծանէր 'ի կրկնատեսակ տաղտկալի տարծանակիր տաղտապանաց մահաբեր կրից , և զամենի հարեալ խայտառակէր զդարձունեալս մահուանն իւրոյ զանօրինացն չարաշուք կաճառ ։

Եւ յայս անրմբերելի վիճտս տանջանաց՝ ոչ 'ի փառաբանական բարբառոյ դադարեալ լռէր , և ոչ 'ի պակուցանողական սպառնալեաց խրոխտ բռնաւորացն ուշանալոյ լինէր ։ այլ ամենազօր Հնորհօք հոգւոյն ՝այ վառեալ պնդապէս՝ զարմանազանս և ՝ծանական պերճաբանեալ՝ զնչ զուս հաճառակամարտիցն կապեալ կաշկանդէր ։ Եւ երկնաւոր վարդապետութեամբ զանբաստու�էր լոյս Ճշմարտութիւն համատիւռ ընդ տիեզերս ծաւալէր ։ և զարծաթ բանին ՝այ 'ի սեզանաւոր հոգիս մարդկան մանաւորէր ։ և ըստ սերմն կենաց 'ի յանդս մտաց համայնից արկանէր ։ և զհացն կենտաբոյծ քաղցելոց հոգւոց անանախանձ ջամբէր ։ և զբարբառ աւետարանին 'ի լսելիս սրտից հնչեցուցանէր ։ և զընդարմացեալսն 'ի քուն մահու՝ իբրև փողով ահաւորութիւն 'ի վեր յարուցանէր ։ մինչ զի և՝ 'ի գլխաւոր աղանդապետացն անտի 'ի լոյս ՝ծագիտութիւն զբազումս առ բերէր ։

Ոչ զառն մոլորելոյ որոգինեայ զաշակերտեալն գրիգոր՝ 'ի խաւարընթաց շաւղաց հառուՀ՝ածեալ , հրամանաւ երկնաւոր աչքայուհեայ

տի

տիրատերն կուսէ և ՝ԱԾԱԾՆԻ՝ ՝ի լոյս հաւատս
ՀՅՄԱՐՏՈՒԹԵՆ հաստատեր . որ և անուանեցաւ
գրիգոր սքանչելագործ՝ մեծ հայրապետ հռչա-
կեալ ընդ տիեզերս , ոչ պատմէ սոկրատ ։

Սա ընդ պետրոսի առաքելոյն երևեալ յՋ-
հաննու ոսկեբերանի ահեղակերպ տեսլեամբ ,
եւ նմա զգիր աբ զոր ունէր ՝ի ձեռին , ասելով
ես յօհաննէս աւետարանիչ առաքեցայ ՝ի ՝ունէ
նպաստամատոյց լինել քեզ . և ՝ի ձեռն այսր
գրոյ ՝աբ՝ ՝ԱԾԱՅԻՆ սքեզան գրեանց ԾԱԾԿԱՄՈՐ-
հուրդ իմաստից հասու պատրաստել ։

Սա զայսահարս զգաստացուցանէր . դիւաց
բռնութեամբ զոչիր . զհոգիս դարձուցանէր անդ-
րէն ՝ի մարմին . զկռամոլութեան խափանէր զանդ-
տի պաշտամունս . զբազնեաց բառնայր զերկրպա-
գութիւն . զդիւցն տարագրէր զմոլեգնեալ խնկաբ-
կուս . զցաւս հալածէր . զախտաժէտս բժշկէր .
զանպամալոյծս հաստատեր . զկոյրս լուսաւորէր .
և զհիւանդութիւս հոգւոց և մարմնոց առողջ-
ացուցանէր ։

ԼԷ . Լ՝ ՝ի վերայ այսր ՝ամի շնորհապարգև ՃՐԻՑ՝
՝ի նկատումն վերին զինքն ամբառնայ , հաստանել
՝ի ԺԱՌԱՆԳՈՒԹԻՆ ամենահարուստ թագաւորու-
թեան անեղական բարութեանն երկնից ։

Յանկայ տեսանել աչք հոգւոյ զմեծ վայելչու-
թիւն փառց ամենակալին , շնորհամբք հոգւոյ աղաղակ
լով ՝ը դութիւն . ՝երբ եկնց երևեցայց երեսացդ ՝այ ։

Յանկայ վայելել զամենագութ հարբ անգին

ակն

ակն պատուական զյանձնեալն իւր ինքեան զհո-
ղեղեն քերովբէն զերկնից թագուհին զսուրբ
ածածինն, և զ հովանեաւ խնամոց նր որդիս-
կան պատուով մեծարիլ. զ կանխաբանութիւն
երգոյն, թէ օրիորդք՝ որոց ոչ գոյ թիւ, ահա՛
մի եմ 'ի նոցանէ որդեգրեալ քեզ 'ի ամէն,
դիր զիս իբրև զնիք 'ի վրայ սրտի քո, և իբ-
րև զապարանջան 'ի վրայ բազկի։ (երգ. գ. 7)։

Յանկայ ուրախակից լինել ընդ ծակցաց
իւրոց առաքելոցն սրբոց 'ի պարս հարսանեաց երկ
նային առագաստին, և ըմպել զբաժակն սիրոյ
'ի ձեռանէ անմահ փեսային, գոչելով զարմաց-
մամբ ըստ օրհնեալ գոլին. զի՞ բարի, և զի՞ վա
յելուչ բնակիլն եղբարց 'ի միասին. քանզի վա-
ռեալ եմ 'ի սէր ձեր, մուծէք զիս 'ի տուն սիրոյ,
և կարգեցէք 'ի վրայ իմ զսէր՝ հաստատել զիս իւ-
րով անուշիս, և հաւաքել յիս խնձորս անապական։

Յանկայ վերձեմել թեթեւաչու հոգւոյն
թեւօք 'ի լուսեղէն կամարն վերին յեկեղեցին
անդրանկաց, և խառնիլ 'ի փառաբանիչս ամե-
նակալ արարչապետին։

Յանկայ ըմպել ըղձական տարփանամբ ոգ
եղջերու ծարաւի՝ զանապական ջուրն կենդանի
յաղբերէն կենաց։

Յանկայ 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհ-
հիս ծովու անպատիր զգաստութիւն 'ի նաւահան
գիսան անբոյթ՝ արքայութեան երկնից ժամանել։

Յանկայ յասպարիզն կենցաղոյս արիապէս
ժուժ

ժուժկալել, առ զօրավարն քո պարզերես մնա՝
նել, և զպատկն յաղթութեան ջնջաղ պերճութ՝ ի
գլուխ ունել, և ընդ հրեշտակս համաշնչապէս
երգել զերեքպրէնին առաջի աթոռոյ նոր երգոր
դութեան։

ԸԼ. Ոչ մեծութեան սիրոյն և եռանդագին
բաղձանացն. զնարդ զամ վայելչութիս կենդ՝
ցաղոյս արհամարհէ, զհաճոյս մարմնոյն լքանէ,
զփառացն պերճութ՝ առաթուր հարկանէ, զկիրս
վշտաց հրբև զբօսանս ցնծութեան ընդդրկէ,
և զանքնութ՝ հրբև հանգիստ իրանաց վարկանի.
սեղան բարելից թուի նմա ջրակերութ՝ ին, և
ջերմջերմ արտասուքն՝ գինի անուշակ. մահն
որ տրտմութեան է բերող ըստ հասարակաց օրի՝
նի, ուրախութեան լինի նմա առիթ, և խորա՝
փոր տապանն՝ անդուղ վերերութեան։

Անոլոր՝ ի թեւս հողմոց բարձրանայ ըստ ոգ՝
ոց. և երկնս հրեղէն կառաք սլանայ՝ ի բար
ձունս. իսկ յօհանանէս զերկիրս յերկին փոխար՝
կէ. զի ի՝ջանելով՝ ի խորս երկրի, ՝ի վերս յերը՝
կինս ելանէ. ուստի և՝ ի ժամս երջանիկ
հանգստուեան իւրոյ, յորդորեր զաշակերտսն իւր
զուարճախառն ցնծութ՝ ասելով. բրեցէք,
բրեցէք ուրդեակք իմ, խորագոյնս բրեցէք։

Բաբէ բարեմիտ յորդորանաց նորին, և
բոցավառ ըղձանացն. առ ի՝նչ նպատակ հա՝
յեցումն մտաց նոր, և զի՝նչ յայտնումն խոր՝
հրդոց. բայց եթէ ՝ածայնոյ սիրոյն է նշանակ,
և

և հոգեշահ խրատու. զի զառաւելութիւն առ
